ՄՐՐՈ
ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԱՐՎԵՍՏԻ ԿԵՆՏՐՈՆ
Հ.Հ.Ք. Երևան,0052
Մարշալ Բաղրամյան 55/6 բն. 56
հեռ.՝ +374 93 49 32 19
էլ.փոստ՝ arsenmrro@yahoo.com

ՀՀ Երևան քաղաքի քաղաքապետ
Պարոն Տիգրան Ավինյանին

Հարգելի՛ պարոն Ավինյան,

«Մրրո հայ ազգային արվեստի կենտրոն» ՀԿ-ն այս տարի ևս կիրականացնի «Գութան» Հայաստանի ավանդական երգի–պարի ամենամյա փառատոնը. նվիրված Գագիկ Գինոսյանի 60-ամյակին:

Փառատոնն այս տարի ևս նախատեսվում է, ինչպես նախորդ տարիներին, անցկացնել Գաֆէսճեան քանդակների պարտեզում՝ ս.թ. օգոստոսի 22-ին, բացօթյա ձևաչափով: Մասնակցությունն անվճար է, տոմսերի վաճառք չի նախատեսվում:

Փառատոնի նպատակն է պահպանել, տարածել, հանրահռչակել ավանդական երգն ու պարը, այն ճանաչելի դարձնել նաև Հայաստան ժամանած զբոսաշրջիկներին՝ այդ օրը մայրաքաղաք Երևանը վերածելով ազգագրական երգ ու պարի տոնի:

Հարգելի՛ պարոն Ավինյան,

Խնդրում ենք Ձեր թույլտվությունը, որպեսզի այն այս տարի ևս տեղի ունենա Գաֆէսճեան քանդակների պարտեզում՝ օգոստոսի 22-ին, ժամը 18:00-23:00:

Կից Ձեզ ենք ներկայացնում Գաֆէսճեան քանդակների պարտեզի կողմից տրամադրված թույլտվությունը, ինչպես նաև նախատեսվող բեմի լուսանկարը: Վերջինս արտացոլում է փառատոնի համար նախատեսվող բեմի տեսքը, որը համապատասխանում է նախորդ տարի օգտագործված բեմին և նախատեսվում է վերարտադրել առանց փոփոխությունների:

«Մրրո հայ ազգային արվեստի կենտրոն» ՀԿ նախագահ,

ՀՀ վաստակավոր արտիստ՝ Արսեն Գրիգորյան

Digitally signed by GRIGORYAN ARSEN 1107680751

Date: 2026.07.03 12:29 AMT